Արձանագրություն N 2.1

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աղբերքի Շատջրեքի, ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի և ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 15.06.2020թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Ար. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

1. Տեղեկություններ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցման և պարզաբանման մասին

(Դ. Շատվերյան)

1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աղբերքի Շատջրեքի, ՀՀ Արմավիրի մարզի գ. Արգինայի և ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Ջիլի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 2020 թվականի հունիսի 11-ին ստացվել է հարցադրում:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահող՝ ---------- Դ. Շատվերյան

Անդամ՝

---------- Ռ. Եղիազարյան

---------- Գ. Գևորգյան

---------- Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 15-ի թիվ 2.1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5

11.06.2020թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը.

Հարցադրում

Հարգելի գործընկերներ

Ընթացակարգի հրավերի 10-րդ կետով նախատեսված է բանկային երաշխիքի տեսքով պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պահանջ, բացի այդ հրավերի 2.6 կետը հնարավորություն է տալիս ընթացակարգին մասնակցելու համատեղ գործունեության պայմանագիր (կոնսորցիում) կնքելու միջոցով:

Խնդրում եմ պարզաբանել, համատեղ գործունեության պայմանագրով մասնակցելու դեպքում արդյոք կարող է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները ներկայացվել կոնսորցիումի կողմ հանդիսացող ոչ ռեզիդենտ (ՌԴ) կազմակերպության կողմից՝ ռուսական բանկից:

Պարզաբանում

Փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել հրավերով սահմանված պայմաններին և պահանջներին համապատասխան:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նազիկ Հարությունյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլ.փոստ՝ tender1@minurban.am

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով